ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 114

«15» 09 2020 թ. գ. Երևան

ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմավիրի մարզի դատախազ Ռաֆայել Ալեքսանդրի Խաչատրյանին փոխադրելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի պաշտոնում նշանակելու ու Սարգիս Վասյայի Մնացականյանին Արագածոտնի մարզի դատախազի պաշտոնից փոխադրելու և Արմավիրի մարզի դատախազի պաշտոնում նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի համապատասխանաբար՝ 14.09.2020թ. N 310-Ա և 15.09.2020թ. 313-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է նրանց միջև կատարել վարույթների, փաստաթղթերի, գույքի, կնիքների ու դրոշմակնիքների հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Կատարել Ռ.Խաչատրյանի կողմից՝ Արմավիրի մարզի դատախազության վարույթների, փաստաթղթերի, գույքի, կնիքների ու դրոշմակնիքների հանձնում, իսկ Ս.Մնացականյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

Հանձնախմբի ղեկավար՝

Աֆանդյան Արմեն - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ

Հանձնախմբի անդամներ՝

Ներսիսյան Կորյուն - Արմավիր մարզի դատախազության ավագ դատախազ

Գաբրիելյան Արամ -	Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի պետ
Խալաթյան Նաիրա -	Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ
Բաղդասարյան Լևոն -	Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետ
Հովսեփյան Մարո -	Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետ
Զորոյան Սոնա -	Արմավիրի մարզի դատախազության տարածքային բաժնի պետ:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը:

Ա.ԴԱՎԹՅԱՆ